ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 14

Երևանի պետական համալսարանի գիտական խորհրդի՝ 2023 **թ**. **մայիսի** 31-ին տեղի ունեցած թիվ 14 նիստի

ՀՀ, ք. Երևան 31.05.2023 թ.

«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի ռեկտոր Հ. Հովհաննիսյանի առաջարկությամբ ներկայացված օրակարգով և ժամանակացույցով 2023 թ. մայիսի 31-ին տեղի ունեցավ ԵՊՀ գիտական խորհրդի թիվ 14 նիստը: Նիստին մասնակցեցին գիտական խորհրդի 80 անդամներից 68-ը (կից ներկայացվում է ցուցակը):

Նիստը նախագահում էր ռեկտոր Հովհաննես Հովհաննիսյանը: Նիստի քարտուղարն էր Մերի Հովհաննիսյանը:

ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ

1. Դոցենտի գիտական կոչումների շնորհում (զեկ.՝ ԵՊՀ մրցութային մշտական հանձնաժողովի նախագահ Պ. Հ. Վարդևանյան):
2. 2022-2023 ուստարվա երկրորդ կիսամյակի անվանական կրթաթոշակի հավակնորդների ընտրության վերաբերյալ ֆակուլտետների գիտական խորհուրդների ընդունած որոշումների հաստատում (զեկ.՝ ԵՊՀ ուսումնամեթոդական վարչության պետ Հ. Գ. Ժամհարյան):
3. Մագիստրոսի կրթական նոր ծրագրերի հաստատում (զեկ.՝ ԵՊՀ գիտական խորհրդի որակի ապահովման մշտական հանձնաժողովի նախագահ Ա. Ա. Սահակյան):
4. ԵՊՀ հրատարակչության առաջադրած չափորոշիչներին լիովին համապատասխանող «Արևելագիտության հարցեր» (խմբ.՝ Ռ. Մելքոնյան) հանդեսը հրատարակության երաշխավորելու հարցը (զեկ.՝ ԵՊՀ հրատարակչության տնօրեն Կ. Գրիգորյան):
5. ԵՊՀ հրատարակչության առաջադրած չափորոշիչներին համապատասխանող «Գիտական Արցախ» (խմբ.՝ Ա. Հարությունյան) հանդեսը հրատարակության երաշխավորելու հարցը (զեկ.՝ ԵՊՀ գիտական քարտուղար Մ. Վ. Հովհաննիսյան):
6. Ընթացիկ հարցեր

1. **Դոցենտի գիտական կոչումների շնորհում**:

Նիստը նախագահող Հ. Հովհաննիսյանը հայտարարեց քվեակազմի առկայության մասին՝ առաջարկելով հաստատել նիստի օրակարգը: Բաց քվեարկությամբ հաստատվեց նիստի օրակարգը:

1. **Դոցենտի գիտական կոչումների շնորհում:** ԵՊՀ գիտական խորհրդին կից մրցութային հանձնաժողովի նախագահ Պողոս Վարդևանյանը ԳԽ հաստատմանը ներկայացրեց դոցենտի գիտական կոչում շնորհելու 8 հայտերը՝ փաստելով, որ ներկայացված բոլոր փաստաթղթերը համապատասխանում են պահանջվող չափորոշիչներին և երաշխավորված են հանձնաժողովի կողմից: Ռեկտոր Հ. Հովհաննիսյանի առաջարկով ստեղծվեց հաշվիչ հանձնաժողով՝ հետևյալ անդամներով՝

1. Բաբաջանյան Աննա (նախագահ),
2. Մանուկյան Երանուհի,
3. Դանիելյան Վերգինե:

Կազմակերպվեց փակ, գաղտնի քվեարկություն, որին մասնակցեցին նիստին ներկա անդամներից 66-ը: Հաշվիչ հանձնաժողովի նախագահը ներկայացրեց քվեարկության արդյունքները.

Հ/Հ	ԱԶԳԱՆՈՒՆ ԱՆՈՒՆ ՀԱՅՐԱՆՈՒՆ	ՊԱՇՏՈՆԸ	ԿՈՂՄ	ԴԵՄ	ԱՆՎԱՎԵՐ
1.	Թադևոսյան Պավել Դավիթի	ԵՊՀ քաղ. դատավարության ամբիոնի ասիստենտ	63	3	0
2.	Մուրադյան Վիկտորյա Ռուդիկի	ԵՊՀ հայոց լեզվի պատմության և ընդհանուր լեզվաբան. Ամբիոնի ասիստենտ	62	4	0
3.	Մարկոսյան Նարինե Վարուժանի	ԵՊՀ հայոց լեզվի պատմության և ընդհանուր լեզվաբանության ամբիոնի ասիստենտ	63	3	0
4.	Մկրտչյան Տիրուհի Գառնիկի	ԵՊՀ երկրաֆիզ., ճարտարագիտ. երկրաբանության և ջրաերկրաբան. ամբիոնի ասիստենտ	61	5	0
5.	Գեղամյան Վարուժան Գեղամի	ԵՊՀ թյուրքագիտության ամբիոնի ասիստենտ	60	6	0
6.	Պողոսյան Նաիրա Հակոբի	ԵՊՀ թյուրքագիտության ամբիոնի ասիստենտ	62	4	0
7.	Դաղյան Իշխան Յուրիկի	ԵՊՀ թարգման. տեսության և պրակտիկայի ամբիոնի ասիստենտ	64	2	0

8.	Գասպարյան Նարինե Ալբերտի	ԵՊՀ անգլ. բանասիրության ամբիոնի ասիստենտ	64	2	0

Որոշվեց.
դիմել ՀՀ ԿԳՄՍՆ բարձրագույն որակավորման կոմիտե՝ դոցենտի գիտական կոչումներ շնորհելու վերաբերյալ ԵՊՀ գիտական խորհրդի որոշումը հաստատելու միջնորդությամբ:

2. 2022-**2023 ուստարվա երկրորդ կիսամյակի անվանական կրթաթոշակի հավակնորդների ընտրության վերաբերյալ ֆակուլտետների գիտական խորհուրդ-ների ընդունած որոշումների հաստատում**

ԵՊՀ գիտական խորհրդի հաստատմանը ներկայացվեցին 2022-2023 ուստարվա երկրորդ կիսամյակի անվանական կրթաթոշակի հավակնորդների ընտրության վերաբերյալ ֆակուլտետների գիտական խորհուրդների ընդունած որոշումները: Հարցը դրվեց քվեարկության (կողմ՝ 68, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0):
Որոշվեց.
հաստատել 2022-2023 **ուստարվա երկրորդ կիսամյակի անվանական կրթաթոշակների հավակնորդների ցուցակը՝ ըստ Հավելվածի**:

3. **Մագիստրոսի կրթական նոր ծրագրերի հաստատում**:

ԵՊՀ գիտական խորհրդի որակի ապահովման մշտական հանձնաժողովի նախագահ Ա. Սահակյան ներկայացրեց կրթական նոր ծրագրերը:

Հ/Հ	**Ֆակուլտետ**	**Կրթական ծրագիր**	**Գործել է/Նոր է**	**Գործելու է**
1.	Ժուռնալիստիկայի	Հեռուստալրագրություն	**Նոր**	Մեկ տարի տևողությամբ, 60 կրեդիտ
2.	Սոցիոլոգիայի	Մարդկային ռեսուրսների կառավարում	Գործել է երկամյա տևողությամբ (120 կրեդիտ):	Մեկ տարի տևողությամբ, 60 կրեդիտ
3.	Սոցիոլոգիայի	Հանրային քաղաքականության հետազոտություններ	**Նոր**	Մեկ տարի տևողությամբ, 60 կրեդիտ

4.	Իրավագիտության	Միջազգային դատարաններ և արբիտրաժ	**Նոր**	Մեկուկես տարի տևողությամբ, 90 կրեդիտ
5.	Եվրոպական լեզուների և հաղորդակ-ցության	Միջազգային գործարար հաղորդակցման լեզվամշակույթ	Գործել է երկամյա տևողությամբ (120 կրեդիտ):	Մեկուկես տարի տևողությամբ, 90 կրեդիտ

Հարցը դրվեց քվեարկության (կողմ՝ 68, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0):
Որոշվեց.
հաստատել Երևանի պետական համալսարանի մագիստրոսի կրթական վերոնշյալ ծրագրերը:

4. **ԵՊՀ հրատարակչության առաջադրած չափորոշիչներին լիովին համապատաս-խանող «Արևելագիտության հարցեր» (խմբ.՝ Ռ. Մելքոնյան) հանդեսը երաշխա-վորելու հարցը:**

ԵՊՀ հրատարակչության տնօրեն Կ. Գրիգորյանը ԵՊՀ գիտական խորհրդին ներկայացրեց «**Արևելագիտության հարցեր» հանդեսի երաշխավորման**
Այնուհետև ԵՊՀ հրատարակչության տնօրեն Կարեն Գրիգորյանը ԳԽ հաստատմանը ներկայացրեց ԵՊՀ հրատարակչության առաջադրած չափորոշիչներին լիովին համապատասխանող «Արևելագիտության հարցեր» հանդեսը հրատարակության երաշխավորելու մասին հարցը: Նրա խոսքով հրատարակվող ամսագրերի համար սահմանվել են որոշակի չափորոշիչներ, որոնց համաձայն՝ դիտարկվում են ամսագրերը և ներկայացվում երաշխավորության: Հարցը դրվեց քվեարկության (կողմ՝ 68, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0):
Որոշվեց.
հրատարակության երաշխավորել «Արևելագիտության հարցեր» հանդեսը:

5. **ԵՊՀ հրատարակչության առաջադրած չափորոշիչներին համապատասխանող «Գիտական Արցախ» (խմբ.՝ Ա. Հարությունյան) հանդեսը հրատարակության երաշխավորելու հարցը:**

Հաջորդիվ ԵՊՀ գիտական քարտուղար Մերի Հովհաննիսյանը ԳԽ հաստատմանը ներկայացրեց ԵՊՀ հրատարակչության առաջադրած չափորոշիչներին համապատասխանող «Գիտական Արցախ» հանդեսը հրատարակության երաշխավորելու մասին հարցը: Ըստ գիտական քարտուղարի՝ հանդեսը

համապատասխանում է ԵՊՀ հրատարակչության առաջադրած չափորոշիչներին: Հարցը դրվեց քվեարկության (կողմ՝ 65, դեմ՝ 3, ձեռնպահ՝ 0):

Որոշվեց.

հրատարակության երաշխավորել «Գիտական Արցախ» հանդեսը:

Գիտական խորհրդի նախագահ Հ. Վ. Հովհաննիսյան

Գիտական խորհրդի քարտուղար Մ. Վ. Հովհաննիսյան